

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿՈՉՈՒԲԱԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԵՐԳԵՅԻ

ՔՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ. ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐ

ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2025

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

КОЧУБАЕВ АЛЕКСАНДР СЕРГЕЕВИЧ

**ЭВОЛЮЦИЯ КОНЦЕПТУАЛЬНЫХ ПОДХОДОВ К ЕСТЕСТВЕННОМУ ПРАВУ:
ИСТОРИЧЕСКИЕ И АКТУАЛЬНЫЕ АСПЕКТЫ**

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 - «Теория и история государства и права, история государственных и правовых учений»

ЕРЕВАН-2025

Ատենախոսության թեման հաստատվել է
իրավունքի ինստիտուտի գիտական խորհուրդում

Գիտական ղեկավար՝

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝

Առաջատար
կազմակերպություն՝

Ա փիլիսոփայության, սոցիոլոգիայի և

Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Լիլիթ Արմենի Ղազանչյան

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գևորգ Բալաբեկի Դանիելյան

Իրավաբանական գիտությունների թեկնածու

Լիանա Մալխասի Մալխասյան

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի

նախարարության կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի նոյեմբերի 1-ին, ժ. 11⁰⁰-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051 ք. Երևան, Հովսեփ Էմին 123):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գիտական աշխատողների գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2025 թվականի սեպտեմբերի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

Իրավաբանական գիտությունների թեկնածու

Զ.Հ.Հարապետյան

Тема диссертации утверждена в на Ученном совете Института философии, социологии и права НАН РА

Научный руководитель:

кандидат юридических наук, доцент

Казанчян Лилит Арменовна

Официальные оппоненты:

доктор юридических наук, профессор

Даниелян Геворг Балабекович

кандидат юридических наук

Малхасян Лиана Малхасовна

Ведущая организация:

Образовательный комплекс министерства внутренних

дел республики Армении

Защита состоится 1-го ноября 2025 г. в 11⁰⁰ часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции Комитета по высшему образованию и науке РА, действующего при Российско-Армянском университете (г. Ереван, 0051, Овсепя Эмина 123).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Российско-Армянского университета.

Автореферат разослан 30-го сентября 2025г.

Ученый секретарь специализированного совета

кандидат юридических наук



Дж. А. Айрапетян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը. Հին և միջին դարերում ձևավորված բնական իրավունքի հայեցակարգերը իրենց տեսական և կիրառական հիմնավորումը ստացան նոր և նորագույն ժամանակաշրջանի իրավական ուսմունքներում և պոզիտիվ իրավունքում (գործող օրենսդրությունում): Հասարակության մասին ժամանակակից գիտությունը հակված է այն թեզին, որ բոլոր մարդիկ ուղղորդվում են էվոլյուցիոն գործընթացով կամ միստիկ ճակատագրով, սակայն ոչ իրավունքով: Չնայած դրան, բնական իրավունքի պահանջը այսօր նույնքան ակներև է, որքան և հարյուրամյակներ և նույնիսկ հազարամյակներ առաջ: Գիտության պատմական զարգացման ընթացքում իրավունքի և պետության մասին ուսմունքների, ինչպես նաև գոյի բնական կամ աստվածային կարգից կամ էլ մարդու բնական հատկանիշներից բխող էթիկական ուսմունքների համակարգում բնական իրավունքը հանդես է գալիս որպես հիմնական հասկացություն: Բնական իրավունքի հայեցակարգերի պատմական առաքելությունը դարաշրջանի ոգուն համապատասխան իրավական իդեալներ արտահայտելն էր: Բնական իրավունքի բուն բնագավառը, ի տարբերություն դրական իրավունքի ոլորտի, ճշմարտության, արդարության պահանջների բնագավառն է, ընդհանուր իրավական նորմերի համակարգն է, որը բխում է մարդու բնությունից և պետք է պարտադիր չափանիշ և ուղեցույց ծառայի դրական իրավունքի համար: Իրավական իդեալը իրենից ներկայացնում է աշխարհին տիրապետելու հոգևոր, գործնական ձև: Իրավունքի էության իրապես խորը ճանաչումը անհնար է միայն իրավաբանական գիտության սահմաններում: Այդ իսկ պատճառով բնական իրավունքի մասին պատկերացումների իրավափիլիսոփայական և կրոնադոգմատիկ համալիր հետազոտությունն է հնարավորություն տալիս ավելի ակներև դարձնել իրավունքի և սոցիալական էվոլյուցիայի միասնականությունը, գիտակցել ներկա ժամանակներում էլ զարգացող իրավական նորմերի, իրավական իդեալների, իրավական ինստիտուտների ձևավորման նախադրյալները:

Այս բոլոր հարցերը կենտրոնանում են բնական իրավունքի հիմնական հայեցակարգերի հանգուցային հիմնախնդիրներում՝ մարդու ազատության, բնության և հասարակության մեջ նրա գոյության զուգորդման հիմնախնդրում, անհատի իրավաչափ վարքի կարգավորման գործում բարոյական նորմերի և իրավաբանական օրենքի փոխգործողության հիմնախնդրում, հասարակության իրավական մշակույթը բնորոշող բարոյաիրավական իդեալների էության հիմնախնդրում և այլն:

Իրավաբանական գիտությունը հենց բնական իրավունքի մասին ուսմունքի մեջ է ջանում գտնել իրավունքի ու օրենքի հարաբերակցության հարցի պատասխանը, փորձում է հասկանալ, որ իրավական սկզբունքներն ու նորմերը փաստացի հասարակական հարաբերությունների հատուկ ձև են՝ ունիֆիկացված ձև, որում գոյություն ունի ներքին տրամաբանություն՝ որպես կոնկրետ իրավահարաբերությունների ներդաշնակության արտահայտություն:

Բնական իրավունքի տեսության զարգացման հետազոտության ընթացքում առաջանում է որոշակի բարդություն՝ կապված այն հանգամանքի հետ, որ պատմական տարբեր դարաշրջաններում այս հասկացության մեջ ներդրվել է միանգամայն տարբեր իմաստ ու բովանդակություն: Իրավունքի տեսաբանները մինչև այժմ չեն կողմնորոշվում անցյալի նշանավոր իրավաբանների և փիլիսոփաների մեկնաբանությունների մեջ և այս առումով մշտապես առկա են տարատեսակ ըմբռնումներ: Այսպես, եթե այս հասկացությունն օգտագործվում է հռոմեական իրավունքի ու քրիստոնեական աստվածաբանության քննարկման համատեքստում, այն շատ դեպքերում թվում է քիչ հասկանալի, բացատրության կարոտ: Դրա հետ մեկտեղ նրանում պարունակվում է որոշակի իմաստ, որը իրավունքի տեսության համար մեծ նշանակություն ունի և ուրիշ որևիցե տեղ չի արտահայտվում: Այս հասկացությունը ոչ միշտ է տեսանելի այն տեսական և գործնական համատեքստերում, որում հիշատակվում է: Այն օգտագործվում է շատ անգամ, սակայն ոչ միշտ ճիշտ ձևով: Նման ոչ հետևողական օգտագործման դեպքերը սովորաբար այնքան աննշան կերպով են տարբերվում միմյանցից, որ դժվար է ասել, թե նրանցից որն է գերիշխողը: Այնուամենայնիվ, գործ ունենք հասարակական և անհատական բարոյականության ստանդարտների հիմնավորման փորձի հետ: Երբ հարց է ծագում բնական իրավունքի մասին, գտնվում է ընդհանուր բովանդակություն՝ կապված իրավունքի ու օրենքի, իրավունքի ու բարոյականության, անձի ազատության ու սոցիալական անհրաժեշտության, մարդու բնական իրավունքների ու նրա պարտականությունների, հասարակության մեջ հաստատուն արժեքների համակարգի ու իրավունքի զարգացման պատմության ընթացքում նրա փոփոխության օրինաչափությունների հիմնահարցերի հետ: Այս բոլոր կատեգորիաները պահպանում են իրենց արդիականությունը նաև ժամանակակից իրավաբանական գիտության համար: Դրա հետ մեկտեղ այսօր առավել ակներև է դառնում իրավունքի միասնական տեսության շրջանակներում այս հասկացությունների ինտեգրման ընդհանուր հայեցակարգային հիմնավորումների անբավարարությունը: Որպես այդպիսի հիմնավորում իրավունքի տեսությունում և իրավական պրակտիկայում առավել հաճախ հանդես է գալիս բնական իրավունքը: Այդ իսկ պատճառով բնական իրավունքի զարգացման հետազոտության, բնական-իրավական տարբեր տեսությունների բուն էության բացահայտումը արդի իրավաբանական մտածողության դիրքերից, դրանց վերաիմաստավորման խնդիրը այնուամենայնիվ արդիական է, հրատապ՝ անկախ այն հանգամանքից, որ իրավաբաններից շատերի մոտ պահպանվել է բացասական վերաբերմունք բնական իրավունքի տեսության հանդեպ:

Բնական իրավունքի տեսությունը միշտ էլ կատարել և շարունակում է կատարել գործող պոզիտիվ իրավունքի կատարելագործման չափանիշի դերը: Այդ դերակատարումը խիստ արդիականորեն է, այսպես կոչված, փոխակերպվող հասարակարգերում նոր ձևավորվող օրենսդրության ձևավորման ու զարգացման համար: Հենց դրանով է պայմանավորված սույն առենախոսական աշխատանքի թեմայի հետազոտության արդիականությունը:

Թեմայի գիտական հետազոտման և մշակվածության աստիճանը. Բնական իրավունքի հասկացության, նրա ձևավորման, բնական իրավական նորմերի աղբյուրների ու բովանդակության, պոզիտիվ իրավունքի հետ հարաբերակցության, այդ թվում նաև այդ թեմայի պատմական-իրավական առումների հարցերով գոյություն ունի ծավալուն մասնագիտական գրականություն: Այս հիմնահարցերը բարձրացվել են դեռ անտիկ դարաշրջանի մեծագույն մտածողների՝ Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի և այլոց աշխատություններում, իրենց հետագա զարգացումը ստացել են միջնադարյան, նոր և նորագույն ժամանակների մտածողների՝ Մխիթար Գոշի, Թովմա Աբլինացու, Թ. Հոբսի, Զ. Լոկի, Բ. Սպինոզայի, Հ. Գրոցիուսի, Ի. Կանտի, Ի. Ֆիխտեի, Գ. Հեգելի և այլոց աշխատություններում: Պատմության տարբեր դարաշրջանների քաղաքական, սոցիալական և տնտեսական պայմանների առանձնահատկությունները կանխորոշել են մոտեցումների բազմազանությունը իրավունքի, բարոյականության, անձի ազատության, արդարության, օրինականության և ավանդաբար բնաիրավական հիմնախնդիրների շրջանակը կազմող այլ հարցերի հարաբերակցության վերաբերյալ: Բնական իրավունքի մասին պատկերացումների կայացման ու զարգացման հիմնախնդիրների համակարգված ուսումնասիրումը սկսվել է միայն 19-րդ դարից: Դա կապված էր բնական իրավունքի տեսության ճգնաժամի հետ՝ պայմանավորված պատմական դպրոցի ներկայացուցիչներ՝ Հ. Հուգոյի, Կ. Սավինյայի, Գ. Պոլխտայի, ինչպես նաև պոզիտիվիստական իրավագիտության ներկայացուցիչների կողմից առաջ քաշված քննադատություններով: Քննադատական վերաբերմունքը, որն այնուհետև փոխվեց բնաիրավական հիմնահարցերի վերաբերյալ աճող հետաքրքրության, առաջ բերեց իրավաբանական հետազոտությունների վերելք: Արդի ժամանակաշրջանում բնական իրավունքի հետ կապված հիմնախնդիրները հանգամանալից կերպով հետազոտված են Ս. Ալեքսեևի, Լ. Անտոնովայի, Վ. Գրաֆսկու, Յու. Գրեցովի, Վ. Կազիմիրչուկի, Վ. Կարտաշովի, Դ. Կերիմովի, Ս. Կոմարովի, Վ. Կուրյալցինի, Է. Կուզնեցովի, Ե. Լուկաշովայի, Դ. Լուկովսկոյի, Գ. Մայցևի, Ն. Մատուզովի, Վ. Ներսեսյանցի, Ա. Պիոնտկովսկու, Վ. Ռումանովսկայայի, Ռ. Ռոմաշովի, Վ. Սալնիկովի, Լ. Սաիրիդոնովայի, Վ. Տումանովի, Վ. Չետվեռնինի, Լ. Յավիչի, Գ. Սաֆարյանի, Հ. Ստեփանյանի, Ա. Խաչատրյանի և այլ գիտնականների աշխատություններում: Այս հեղինակների աշխատություններում պարունակվող տեսական դրույթների և եզրահանգումների զարգացումը ենթադրում է վերադարձ դեպի փիլիսոփայաիրավական դասական ժառանգությունը և դրա վերահիմնաստվորումը: Ու թեև այսօր էլ չկա հատուկ աշխատություն՝ նվիրված բնական իրավունքի տեսության կայացման ու զարգացման հիմնահարցերին, այդուհանդերձ, դրա իրականացման համար արդի դարաշրջանի փիլիսոփայաիրավական միտքն արդեն ստեղծել է բավարար աղբյուրագիտական և մեթոդաբանական բազա: Դրանք կազմում են այն աշխատությունները, որոնք շոշափում են իրավունքի փիլիսոփայության զարգացման ընդհանուր օրինաչափությունների ու փուլերի հարցերը, հետազոտում են առանձին

հեղինակների ստեղծագործությունները, ինչպես նաև եվրոպական և ռուս հեղինակների աշխատությունները:

Հաշվի առնելով թեմայի հետազոտվածության աստիճանը՝ անհրաժեշտ ենք համարում ատենախոսության ձևաչափով իրականացնել բնական իրավունքի տեսության հետ կապված արդիական հիմնահարցերի համալիր հետազոտություն:

Հետազոտության օբյեկտ են հանդիսանում փիլիսոփայության և իրավունքի տեսության դասականների, ինչպես նաև ժամանակակից հեղինակների աշխատություններում ներկայացված բնական իրավունքի փիլիսոփայաիրավական դոկտրինի պատմական զարգացման հիմնական ուղենիշները, դրանց բովանդակությունը և ներքին միասնականությունը, որոնք վերլուծվում են ինչպես իրավական և իրավական-փիլիսոփայական ուսմունքների պատմության շրջանակներում, այնպես էլ իրավաբանական պրակտիկայի և օրենսդրության արդի հիմնախնդիրների համատեքստում:

Հետազոտության առարկա է հանդիսանում բնական իրավունքի հայեցակարգային մոտեցումների զարգացման օրինաչափությունը և միտումները, որոնք դիտարկվում են որպես տեսական նախադրյալներ իրավունքի և պետության տեսության հիմնարար կատեգորիաների հետագա մշակման, պոզիտիվ իրավունքի կատարելագործման համար:

Հետազոտության նպատակը իրավական պետության ձևավորման և քաղաքացիական հասարակության կառուցման համար անհրաժեշտ մեթոդական ուղեցույցի մշակումն է, իրավունքի տեսության հենքի վրա բնական իրավունքի տեսության զարգացման նախադրյալների, ընթացքի և արդյունքների համալիր վերլուծությունը, իրավունքի և պետության, անձի և քաղաքացիական հասարակության մասին ուսմունքների ընդհանուր տեսական և մեթոդաբանական զարգացման ուղղությունների վերլուծումը:

Ձևակերպված նպատակին հետամուտ՝ փորձ է արվում լուծել հետևյալ **խնդիրները**.

1. իրավական ուսմունքների համատեքստում բնորոշել հիմնարար բնական-իրավական կատեգորիաների մշակման մեթոդաբանական հիմքերը և առանձնահատկությունը,

2. բացահայտել բնական իրավունքի մասին պատկերացումների պատմական զարգացման հիմնական ուղենիշները և դրանց առանձնահատկությունները,

3. վերլուծել բնական-իրավական հիմնահարցերի լուծման ձևերը նոր ժամանակի փիլիսոփայական-իրավական հայեցակարգերում,

4. հաշվի առնելով իրավաբանական հիմնական դպրոցների և ուղղությունների բազմազանությունը՝ բնորոշել բնական իրավունքի տեսության հանդեպ հետդասական փիլիսոփայության վերաբերմունքի հիմնական ձևերը,

5. վերլուծել բնաիրավական ժառանգության այն գաղափարները, որոնք հնարավորություն են տալիս լուծել հիմնախնդիրներ, որոնք ծառանում են քաղաքացիական հասարակության և իրավական պետության զարգացման ընթացքում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմում են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ իրավագիտությանը հատուկ մեթոդներները, այդ թվում՝ անալիզը, սինթեզը, դեդուկցիան, ինդուկցիան, դիալեկտիկական, պատմական և տրամաբանական մեթոդները, համակարգային-կառուցվածքային, ձևական-իրավաբանական, համակարգային վերլուծության և այլ մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը. Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ հայրենական իրավագիտության մեջ, առաջին անգամ փորձ է արվել համապարփակ և բազմակողմանի վերլուծության ենթարկել բնական իրավունքի հայեցակարգային մոտեցումների զարգացման չափորոշիչները, առանձնահատկություններն ու զարգացման միտումները, դրանք ներկայացնելով ոչ միայն պատմական, այլև արդի իրավաքաղաքական մտքի զարգացումների լույսի ներքո: Հեղինակը բացահայտել է բնական իրավունքի առանձին հայեցակարգերի պատմափիլիսոփայական հիմքերը, ինչպես նաև վեր է հանել բնական իրավունքի տարբեր դպրոցների ընդհանրությունները և առանձնահատկությունները, դրանց տեսական (դոկտրինայ) և պրակտիկ-կիրառական նշանակությունը՝ պոզիտիվ իրավունքի կատարելագործման ուղղությամբ: Ելնելով համալիր վերլուծության արդյունքներից՝ ատենախոսության հեղինակը իրականացրել է բնաիրավական կատեգորիաների համակարգում, բնական իրավական կարևորագույն հասկացությունների տեղի և դերի մասին տեսական պատկերացումների մշակում: Իրավունքի փիլիսոփայության համաշխարհային դասականների աշխատությունների խորքային ուսումնասիրության հիման վրա հեղինակը փորձել է մշակել բնական իրավունքի տեսության ծագման, կայացման և զարգացման ուրույն հայեցակարգ՝ հիմնված փիլիսոփայական-իրավական հարացույցների նորացման և իրավական կատեգորիաների գիտական վերլուծության գերակայությունների փոփոխության մասին պատկերացումների վրա: Բացի վերոշարադրյալից աշխատանքում հանգամանալից վերլուծության են ենթարկվել բնական իրավունքի տեսության դերն ու նշանակությունը պոզիտիվ իրավունքի (գործող օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի) կատարելագործման խնդրում, ինչպես նաև բնական իրավունքի հիմնադրույթների տրանսֆորմացիան ազգային և միջազգային իրավունքի համակարգում:

Գիտական նորույթի տարրերը պարունակվում են նաև **պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներում.**

1. Բնական իրավունքի վերացականությունը հաղթահարելու, այն գործնական հարթություն տեղափոխելու առումով մասնագիտական գրականության մեջ պետք է առաջ քաշել բնական-դրական իրավունքի գաղափարը: Ըստ էության, նշված մոտեցումը նորարական, բավականին ռացիոնալ լուծումներ առաջակող գիտական վարկած է: Իրավունքի տարբեր դպրոցների (հատկապես բնական իրավունքի և իրավական պոզիտիվիզմի) սինթեզը հնարավորություն է տալիս առաջ քաշել և հիմնավորել բնական-դրական իրավունքի գաղափարն ու հայեցակարգը:

2. Բնական իրավունքները չեն կարող ինքնիրացվել, դրանց կենսագործման համար անհրաժեշտ է պետական կամ վերապետական մակարդակում այդպիսի

իրավունքների ճանաչում և վավերացում: Այլապես բնական իրավունքները կմնան հոչակագրային կանխադրությներ: Այո, բնական իրավունքները պետք է ինքնիրացվեն, սակայն արդի աշխարհում անհնար է պատկերացնել վերջիններիս կիրառումը առանց բնական իրավունքի նորմատիվացման:

3. Աշխատանքում հիմնավորվում է այն վարկածը, որ բնականի հակադրումը արհեստականին, դրանց հակառակ արժեքային գնահատականով հանդերձ, կազմում է բնական իրավունքի իմաստը: Բնական-իրավական այս սխեմայի մշտական բաղադրիչը, բնականի և արհեստականի հակադրման հենց այդ սկզբունքը ներառում է դրանց արժեքային գնահատականը և բնականի գերակայությունը արհեստականի հանդեպ: Սակայն դա չի նշանակում բնականի և արհեստականի (պոզիտիվ իրավունքի) օբյեկտիվ հակամարտության գոյությունը: Իրավունքի զարգացման արդի փուլում հստակորեն նշմարվում է բնականի և արհեստականի կոնվերգենցիան (փոխակերպման գործընթացը), ինչը հաստատվում է զարգացած իրավական համակարգերում բնական իրավունքի և պոզիտիվ իրավունքի ներդաշնակ զարգացումը՝ հատկապես սահմանադրաիրավական նորմերում, մարդու իրավունքների համակարգում և արդարադատության ոլորտում:

4. Դրական իրավունքի բովանդակության մեջ բնական իրավունքի արժեքների ներթափանցման գործնական հետևանքը, հիմնական ձևը իրավական օրենքներն են, որոնց շնորհիվ բնական իրավունքը, նորմատիվ կարգավորման բնույթ չունենալով հանդերձ, ձեռք է բերում կիրառական նշանակություն: Հիմնված լինելով բնական իրավունքի ելակետային սկզբունքների վրա՝ իրավական օրենքները ձեռք են բերում այն արժեքային որակները, որոնք թույլ են տալիս փոխել գործող դրական իրավունքի էությունը, բովանդակությունը, սոցիալական ուղղվածությունը, իսկապես պաշտպանել մարդու իրավունքները և ազատությունները:

5. Ընդհանրացնելով բնական իրավունքի յուրահատկության և էության մասին հետազոտված դրույթները, կարելի է ձևակերպել բնական իրավունքի ընդհանուր (ունիվերսալ) հասկացության հետևյալ բնորոշումը. բնական իրավունքը ամենուր և միշտ առկա, տվյալ տեղի և ժամանակի համար մարդուն արտաքինից նախատուր իրավունքն է, որը որպես մարդկային գոյի օբյեկտիվ արժեքների և պահանջների արտահայտություն, հանդիսանում է իրավունքի իմաստի միակ և անվերապահ սկզբնաղբյուրը և բացարձակ չափանիշը, որին պետք է համապատասխանի պոզիտիվ իրավունքն ու պետությունը:

6. Արդեն մեր օրերում *jus naturale*-ն՝ մարդու իրավունքների բնաիրավական տեսությունը, մասնագիտական գրականության մեջ իր տեղը զիջել է նոր հիմնարար իրավաբանական ոլորտի՝ Մարդու իրավունքների տեսության: Նորագույն ժամանակաշրջանում ընդունված միջազգային պայմանագրերը և երկրների սահմանադրությունները բնական իրավունքի հիմնական կարգադրագրերը պոզիտիվացրել են և մեր օրվա իրավագիտության խնդիրն այդ կարգադրագրերի իրագործումն է: Այն ինչ մի քանի հազարամյակ գոյություն ունեւ որպես աստվածային իրավունք, հայեցակարգ, տեսություն արդեն դրական իրավունք է:

7. Բնական իրավունքի տեսության առաքելությունը դարաշրջանի ոգուն համապատասխան իրավական իդեալներ արտահայտելն է: Հեղինակի կարծիքով բնական իրավունքի բուն բնագավառը, ի տարբերություն դրական իրավունքի, ճշմարտության, արդարության, ձևական հավասարության հիմնադրույթների պահանջների արտացոլումն է, ընդհանուր իրավական սգբունքների համակարգն է, որը բխում է մարդկային բանականությունից և պետք է կանխորոշի դրական իրավունքի բովանդակությանը և զարգացման հեռանկարները:

8. Բնական իրավունքները հանդիսանում են հասարակական զարգացման արդյունք, թե Աստծո կողմից ծրագրավորված երևույթ: Նշված սկզբունքայնությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործնականում ցանկացած իրավունք կարելի է համարել բնական, բնությունից կամ Աստծուց տրված, ինչը բավականին վտանգավոր գործընթաց է, քանի որ մանիպուլյատիվ աշխարհում Աստծո կամքը կարող է խեղաթյուրվել և անձնական ցանկությունը ներկայացվել որպես բնական իրավունք: Որպես իրավիճակի հաղթահարում կարելի է ընդունել այն մոտեցումը, որ բոլոր իրավունքները և բոլոր սահմանափակումները ստեղծել է մարդը իր հասարակական կյանքը կարգավորելու համար: Պարզապես կան որոշ իրավունքներ, որոնք իրենց նշանակությամբ այնքան ֆունդամենտալ են, որ դրանք մերժենում են աստվածային արարչագործությանը, սակայն քանի դեռ Աստված չի խոսել մեզ հետ (ինչպես օրինակ Սինայ լեռան վրա Տերը խոսեց Մովսեսի հետ և նրան տվեց վարքագծի կանոնները), մենք չենք կարող պնդել, որ այս կամ այն իրավունքը ունի աստվածային ծագում:

9. Բնաիրավական հայեցակարգի գնահատողական գործառույթի իրացման հիմնական պլատֆորմը իրավասեղծումն է: Իրավաստեղծման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել մարդու բնական իրավունքները և չընդունել այնպիսի նորմատիվներ, որոնք հակասեն վերջինիս: Բնական իրավունքի տեսությունը չի պատասխանում այն հարցին՝ թե ինչ է իրավունքը: Քննարկվող տեսությունը մետաիրավական է, և կոչված է պատասխանելու որակապես այլ հարցի, մասնավորապես՝ ինչպիսին պետք է լինի իրավունքը:

10. Համաձայն բնական-իրավական մոտեցման՝ իրավունքն իր բնույթով, իմաստով, էությամբ ու ընկալմամբ իդեալական, բնական իրավունքն է: Սակայն հարցին՝ թե ինչ է բուն բնական իրավունքը, բնական-իրավական տարբեր հայեցակարգեր տալիս են տարբեր պատասխաններ: Ինչպես ավանդական, այնպես էլ վերածնված բնական իրավունքի բովանդակությունը միատարր չէ, սակայն իրենց խորքում երկուսն էլ ունեն մեկ միասնական ըմբռնում. այն վերպետական և վերպոզիտիվ իրավունք է: Չէ՞ որ երբեք չի եղել, չկա և սկզբունքորեն լինել չի կարող որևէ միակ բնական իրավունքի հայեցակարգ, այլ եղել են և կան բազում տարբեր բնական իրավունքի հայեցակարգեր, որոնք տարբեր մոտեցումներ ունեն բնական իրավունքի սկզբի էության և բովանդակության վերաբերյալ: Այնպես որ բնական իրավունք միասնական ընդհանուր անվան տակ ենթադրվում են իրենց բովանդակությամբ, էությամբ ու հասկացությամբ բնական իրավունքի զանազան տարբերակներ, ինչպես նաև տարբեր իմաստներ, որոնց կայունացած ու լայնորեն

օգտագործվող հասկացության մեջ ամփոփվում են նախկին և ժամանակակից հայեցակարգեր և տեսություններ:

11. Բնական իրավունքները (և առհասարակ պետությունը և իրավունքը) ստեղծված են Աստծո կողմից: Սակայն գիտության տեսանկյունից առկա է բարդություն բնական իրավունքների ծագումը Բարձրյալի հետ կապելու և այդպիսի տեսակետը հիմնավորելու հարցում, քանի որ առկա է խնդիր Աստծո գոյության ձևերի և Աստծո արտահայտման հիմնավորման հետ: Անհրաժեշտ է ընդունել, որ այն ուժը, որը ստեղծել է մարդուն, նրան տվել է նաև բնական իրավունքներ, որոնք փոփոխության ենթակա չեն: Այս առումով պաշտպանության է դուրս բերվում այն թեզը, որ մարդու բնական իրավունքները մարդակերտ չեն:

Հետազոտության նորմատիվ հիմքն են Մարդու իրավունքներին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը արտահայտվում է նրանում, որ ատենախոսությունում ձևակերպված տեսական դրույթներն ու եզրահանգումները զարգացնում և հավելում են իրավունքի և պետության ընդհանուր տեսության հիմնադրույթները՝ նվիրված օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավունքի, իրավունքի աղբյուրների, իրավահարաբերության, իրավագիտակցության և իրավական մշակույթի հասարակական գործընթացների կարգավորման գործում պետական ինստիտուտների դերի, ինչպես նաև տարբեր իրավական ուսմունքների հարցերին: Ատենախոսության մեջ քննվող հիմնահարցերը իրենց ներկայացնում են տեսականորեն կարևոր առում հասարակության և մարդու մասին գիտության տարբեր բնագավառների՝ պատմության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի, իրավունքի ինտեգրման արդիական խնդրի տեսակետից:

Հետազոտության գործնական-կիրառական նշանակությունը.

Հետազոտության արդյունքներն իրենցից ներկայացնում են որոշակի գիտական արդյունք, որը հետագայում կարող է կիրառվել իրավական պետությունում անձի իրավունքների ազատությունների երաշխիքների հետազոտության, իրավաստեղծման և իրավակիրառ պրակտիկայի ժամանակ: Ատենախոսության եզրակացությունները կարելի է օգտագործել նաև իրավունքի և պետության տեսության, իրավական ու քաղաքական ուսմունքների պատմության, իրավունքի փիլիսոփայության մասին դասախոսություններում: Հետազոտության արդյունքների հիման վրա կարող են մշակվել հանձնարարականներ իրավունքի և պետության հիմնարար հարցերի վերաբերյալ: Ատենախոսության մեջ նախանշված են օրենդրության, օրենսդրական գործընթացի կատարելագործման ուղիները, որոնք կամրապնդեն հասարակական կյանքի զանազան ոլորտներում մարդու իրավունքների և ազատությունների սկզբունքները, անձի և պետության հարաբերությունների հիմունքները, կնպաստեն անձի բարոյական, իրավական դաստիարակությանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը. Աշխատանքը իրականացվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի

Պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ տեղի է ունեցել ատենախոսական աշխատանքի քննարկումը և այն երաշխավորել է հրապարակային պաշտպանության: Հետազոտության առավել կարևոր դրույթներն արտացոլվել են հեղինակի գիտական հրապարակումներում, իսկ դրանցից մի քանիսը հեղինակի կողմից ներկայացվել են գիտաժողովի և սեմինարների շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է հետազոտության նպատակով և դրանում առաջ քաշված դրույթներով, ներկայացված խնդիրներով և հետազոտության տրամաբանությամբ: Ըստ այդմ՝ ատենախոսությունը բաղկացած է ներածական մասից, չորս գլուխներից, որոնք ներառում են տասը ենթագլուխներ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված են հետազոտության թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, թեմայի գիտական հետազոտման և մշակվածության աստիճանը, մեթոդաբանական հիմքերը, հետազոտության գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության նորմատիվ հիմքերը, հետազոտության տեսական և գործնական-կիրառական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Բնական իրավունքի պատմական զարգացման էվոլյուցիան»** վերտառությամբ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլուխում՝ **«Բնական իրավունքի պատմական զարգացման հիմնական ուղենիշները»** վերտառությամբ, վերլուծված են բնական իրավունքի ծագման պատմական նախադրյալները և զարգացման միտումները, որոնց շրջանակներում ընդգծվել են բնաիրավական հայեցակարգի և Սուրբ գրքերի դերը, որպես հասարակական կյանքի «աստվածային էտալոն», որոնցում զետեղված բարոյակրոնական կանխադրույթները հավակնել են կարգավորել մարդկանց կենսագործունեության առանձին բնագավառներ՝ դուրս գալով զուտ կրոնական հարցերի կարգավորման շրջանակներից: Հեղինակը, բնական իրավունքի ծագման և զարգացման հիմնահարցի հետազոտման արդյունավետության բարձրացման նպատակով, բնական իրավունքի վերաբերյալ մոտեցումները պայմանականորեն խմբավորվել է՝ անտիկ դարաշրջանի, միջնադարի, լուսավորականության շրջանի բնական իրավունքի հայեցակարգերի, վերածնված բնական իրավունքի և Ժամանակակիցի, ինչպես նաև իրականցել համապատասխան Ժամանակագրական վերլուծություններ:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ **«Բնական իրավունքի ազդեցությունը հայ իրավական-քաղաքական ուսմունքների վրա»**, վերտառությամբ, վերլուծվել են հայ երևելիների, այդ թվում՝ Մ. Մաշտոցի, Ե. Կողբացու, Շ. Շահամիրյանի, Մ. Գոշի և այլոց մեծաթեք աշխատությունները՝ վերաբերելի խնդրո առարկա բնագավառին: Աշխատանքում արվել է եզրահանգում, որ բնաիրավական հայեցակարգը իր առեղծի ազդեցությունն է ունեցել հայ իրավաքաղաքական մտքի

պատմության զարգացման վրա, քանի որ պետականության բացակայության պայմաններում բնական համարվող իրավունքները նմանվում էին երազանքների, ազգային գաղափարախոսության, որին ձգտում էր հայ մարդը:

Ատենախոսության երկրորդ գլխի՝ **«Բնական իրավունքի տեսական եվ մեթոդաբանական տեսանկյունները»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Ատենախոսության երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Բնական իրավունքի տեսության ընդհանուր բնութագիրը»** վերտառությամբ, հետազոտման առարկա են դարձել բնական իրավունքի էությունը և բովանդակությունը, վերջինիս տարբերությունը պոզիտիվ իրավունքից, ինչպես նաև փորձ է կատարվել տալ բնական իրավունքի սահմանումը, այն բնորոշելով որպես տեղից և ժամանակից անկախ, մարդուն արտաքինից նախատուր իրավունք, որը որպես մարդկային գոյի օբյեկտիվ արժեքների և պահանջների արտահայտություն, հանդիսանում է իրավունքի միակ և անվերապահ սկզբնաղբյուրը և բացարձակ չափանիշը:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Բնական իրավունքի տեսության մեթոդաբանական առման էությունը»** վերտառությամբ, վերլուծված են բնաիրավական հայեցակարգի բովանդակության բացահայտման մեթոդաբանական ասպեկտները, ինչը ենթադրում է ոչ միայն հետազոտական մեթոդների բազմազանություն, այդ թվում՝ պատմաիրավական, իրավահամեմատական, համակարգային վերլուծության մեթոդների կիրառում, այլև բնական իրավունքի տարբեր հայեցակարգերի վերաբերյալ տարբերակված մոտեցումներ և հիմնավորումներ՝ օգտագործելով նաև սիներգետիկայի և հերմենևտիկայի մեթոդաբանական հիմունքները:

Երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ **«Բնական իրավունքի առարկայական առման առանձնահատկությունները»** վերտառությամբ, համակողմանի հետազոտության են ենթարկել բնաիրավական հայեցակարգի առարկան կազմող հիմնադրույթները: Հեղինակը հիմնավորում է, որ բնական իրավունքի սկզբունքները հանդիսանում են նաև դրական իրավունքի համակարգերի հիմքում ընկած սկզբունքներ, որոնք պահանջում են, որպեսզի իշխանությունն իրականացվի օրենքի և իրավունքի գերակայության շրջանակներում: Ավելին, դրական օրենքները կարող են չճանաչվել լիարժեք, նույնիսկ այն դեպքում, երբ ամբողջությամբ չեն համապատասխանում բնական իրավունքի սկզբունքներին, իսկ բնական իրավունքից հրաժարումը կարող է հանգեցնել իրավական նիհիլիզմի:

Ատենախոսության երրորդ գլխի՝ **«Բնական իրավունքի տեսական-հայեցակարգային հիմնադրույթները»** վերտառությամբ որը բաղկացած է երեք ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Բնական իրավունքի տեսական-հիմնադրույթային վարկածները»** վերտառությամբ առաջ են քաշվել բնական իրավունքի հիմնական վարկածները և տրվել դրանց սպառիչ բնութագրերը: Այդ վարկածները հանգում են հետևյալին՝¹ պետության կողմից սահմանված դրական իրավունքին (օրենսդրությանը) զուգահեռ գոյություն ունեն վերօրենսդրական

բնական իրավունքներ և բնական օրենքներ,2)բնական իրավունքը հանդիսանում է օրենսդրության (դրական իրավունքի) գնահատման չափանիշ,3) բնական իրավունքների հիմքը այնպիսի բարոյական արժեքներն են, ինչպիսիք են արդարությունը, հավասարությունը, ազատությունը,4) ի ծնե իրավունքները ունեն ավտոնոմ կիրառություն:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավաբանական նատուրալիզմը (բնական իրավունքը) որպես արդարության կանխադրույթ»** վերտառությամբ, քննարկման առարկա է դարձել բնական իրավունքի և արդարության հարաբերակցությունը, որը բնորոշ է իրավաբանական նատուրալիզմին: Հեղինակը ներկայացնում է Գ. Ռադերովսի հայտնի բանաձևը, որտեղ գործող պոզիտիվ իրավունքը այնքան աղաղակող ձևով է անհամատեղելի լինում արդարության հետ, որ ամբողջովին հերքում է այն՝ որպես իր բնույթով իրավական. այն չպետք է կիրառվի, քանի որ իրավունքը, այդ թվում՝ պոզիտիվը, չի կարելի սահմանել այլ կերպ, քան կարգուկանոն և օրենքների ամբողջականություն (Satzung), որոնք իրենց էությամբ կոչված են ծառայելու արդարությանը: Արդարության պահանջների բովանդակությունը տարբեր կերպ է արտահայտվում այդ թվում՝ որպես տրանսցենդենտալ երևույթ, Աստծո կողմից ընտրյալներին վստահված գաղտնիք:

Ատենախոսության չորրորդ գլխում՝ **«Բնական իրավունքի տեսության փոխակերպումը նորագույն ժամանակաշրջանի իրավական ուսմունքներում և գործող օրենսդրությունում»** վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Ատենախոսության չորրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Բնաիրավական հայեցակարգի փոխակերպումը արդի իրավական ուսմունքներում»** վերտառությամբ, քննարկվում է 20-րդ դարի 2-րդ կեսից հետո բնական իրավունքի իմպլեմենտացիոն գործընթացը, երբ մարդկությունն, ի վերջո, հանգեց այն մտքին, որ միայն պոզիտիվ օրենսդրությամբ հնարավոր չէ արդյունավետ պաշտպանել մարդու իրավունքները, իսկ դրա համար անհրաժեշտ էր ստեղծել այնպիսի պետաիրավական կառուցակարգ, որը հիմնված կլիներ ժողովրդավարական սկզբունքների վրա: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտություն առաջացավ վերստին իմաստավորել դարերից եկած բնական իրավունքի հսկայական ներուժը, որի միջոցով հնարավորություն է ստեղծվում կատարելագործել պոզիտիվ իրավական համակարգը, որպեսզի կանխարգելի ոչ մարդկային, բռնատիրական ռեժիմի վերադարձը, դրանով պաշտպանելով մարդու արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները:

Չորրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **«Իրավաբանական լիբերտարիզմը որպես բնական և պոզիտիվ իրավունքի հակասականության հաղթահարման տեսական հայեցակարգ»** վերտառությամբ, համապարփակ վերլուծության է ենթարկվում ազատական-իրավաբանական տեսությունը, որպես բնական և դրական իրավահասկացման հոսքերի բանավեճերի և թերությունների հաղթահարման միջոց: Հեղինակն, իրականացնելով համեմատական վերլուծություն, ընդգծում է, որ բնական-իրավական մոտեցումը և լիբերտար մոտեցումը իրենցից ներկայացնում են իրավունքի հանդեպ տեսական մոտեցման առաջացման,

խորացման ու զարգացման փուլեր ու աստիճաններ, պատմական առաջընթաց տեսական իրավական մտքի բնագավառում: Լիբերտար մոտեցումը ենթադրում է (և ներառում է) իրավունքի ու օրենքի տարբերակման և հարաբերակցության բոլոր հնարավոր ձևերը՝ անջատումից ու նրանց միջև հակամարտությունից (ոչ իրավական օրենքի դեպքում) մինչև դրանց համընկնում (իրավական օրենքի դեպքում): Իր հերթին, լիբերտար-իրավաբանական տեսակետից պետությունը մեկնվում է իր իրավական ու հակաիրավական դրսևորումների ողջ տիրույթում (իրավախախտ պետությունից մինչև իրավական պետություն):

Զորրորդ գլխի երրորդ **«Բնական իրավունքի հիմնադրույթների փոխակերպումը ՀՀ պոզիտիվ իրավունքում (գործող օրենսդրությունում)»** ենթագլխում կատարված հետազոտության արդյունքներով արվել է պնդում, որ արդի զարգացած իրավական համակարգերում բնական իրավունքի և պոզիտիվ իրավունքի հակադրությունը գործնականում, ըստ էության, վերացել է: Տեսական հարթությունում դեռևս շարունակվում են գիտական բանավեճերը և դա բնական է: Բնական իրավունքի հիմնադրույթներն իրենց որոշակի ազդեցություն են թողել ազգային իրավունքի (օրենսդրության) բովանդակության վրա: Դա վառ արտացոլված է հատկապես սահմանադրական իրավունքում, մասնավորապես սահմանադրաիրավական նորմերում՝ ՀՀ Սահմանադրության նախաբանում, 1-ին և 2-րդ գլուխներում: ՀՀ Սահմանադրության նախաբանում արտացոլված են ոչ միայն պետականաստեղծ հայ ժողովրդի իղձերն ու նպատակները, այլ նաև անկախ ու ազատ ապրելու աստվածային ու բնական իրավունքից բխող մարդկային մղումները:

Իրականացված հետազոտության արդյունքում հեղինակը ձևակերպել է հետևյալ եզրահանգումները.

1. Բնական իրավունքի հայեցակարգն իր զարգացման ընթացքում անցել է երկար ու ծիգ դարեր: Այն երբևիցե չի եղել միատարր, միասնական և ամբողջական տեսություն, քանզի բովանդակվում է բազմաթիվ երանգներ, շեշտադրումներ և տարբեր մոտեցումներ: Հնագույն ժամանակաշրջանում (հին և անտիկ դարերում) բնական իրավունքի սաղմերը նշմարվում էին դիցաբանական-առասպելաբանական և կրոնական պատկերացումներում: Համեմատաբար հավաքական և տրամաբանական բովանդակությամբ բնական իրավունքը ձևավորվեց հունահռոմեական իրավական մշակույթում: Սակայն նույնիսկ զարգացած հունական փիլիսոփայական համակարգերում և հռոմեական իրավական մշակույթում բնական իրավունքի մասին պատկերացումները դեռ չձևավորվեցին որպես փիլիսոփայական իրավական բնույթի միասնական տեսություն:

2. Գիտության պատմական զարգացման ընթացքում իրավունքի և պետության մասին ուսմունքների, ինչպես նաև գոյի բնական կամ աստվածային կարգից, կամ էլ մարդու բանական հատկանիշներից բխող էթիկական ուսմունքների համակարգում բնական իրավունքը հանդես է գալիս որպես հիմնարար և ելակետային հասկացություն: Բնական իրավունքի տեսության պատմական գործառույթը դարաշրջանի ոգուն համապատասխան իրավական իդեալներ արտահայտելն էր: Բնական իրավունքի բուն բնագավառը, ի տարբերություն դրական իրավունքի

բնագավառի, ճշմարտության, արդարության պահանջների բնագավառն է, ընդհանուր իրավական նորմերի համակարգն է, որը բխում է մարդկային բանականությունից և պետք է պարտադիր չափանիշ և ուղեցույց ծառայի դրական իրավունքի համար:

3. Բնական իրավունքի տեսության զարգացման պատմական-իրավական հետազոտության ընթացքում առաջանում է որոշակի բարդություն՝ կապված այն բանի հետ, որ պատմական տարբեր դարաշրջաններում այս հասկացության մեջ ներդրվում էր միանգամայն տարբեր իմաստ: Դրա հետ մեկտեղ պետք է հաշվի առնել, որ «բնական» հասկացության էվոլյուցիան՝ կապված է լատինական «natura» բնության հասկացության զարգացման հետ: Սիկերոնի և հռոմեական իրավաբանների մոտ հստակորեն ձևավորված իրավաբանական այս հասկացության իմաստը զգալիորեն լրջվում է միջնադարում: Նոր ժամանակների մտածողների մոտ այն կրկին ձեռք է բերում կոնկրետություն և կատեգորիկ հստակություն:

4. Համաձայն բնական-իրավական մոտեցման՝ իրավունքն իր բնույթով, իմաստով, էությամբ ու ընկալմամբ իդեալական, բնական իրավունքն է: Սակայն հարցին՝ թե ինչ է բուն բնական իրավունքը, բնական-իրավական տարբեր հայեցակարգեր տալիս են տարբեր պատասխաններ: Ինչպես ավանդական, այնպես էլ վերածնված բնական իրավունքի բովանդակությունը միատարր չէ, այն պարունակում է բազմաթիվ երանգներ և դրսևորման ուղղություններ, սակայն իրենց խորքում երկուսն էլ ունեն մեկ միասնական ըմբռնում: Այն վերաբերական և վերադրելի իրավունք է: Չէ՞ որ երբեք չի եղել, չկա և սկզբունքորեն չի եղել կարող որևէ միակ բնական իրավունքի հայեցակարգ, այլ եղել և կան բազում տարբեր (առանձին, անջատ) բնական իրավունքի հայեցակարգեր, որոնք տարբեր մոտեցումներ ունեն բնական իրավունքի սկզբի (աստվածային, բնության, բանականակության), էության և բովանդակության վերաբերյալ: Այնպես որ բնական իրավունք միասնական ընդհանուր անվան տակ ենթադրվում են իրենց բովանդակությամբ, էությամբ ու հասկացությամբ բնական իրավունքի զանազան տարբերակներ, ինչպես նաև տարբեր իմաստներ, որոնց կայունացած ու լայնորեն օգտագործվող հասկացության մեջ ամփոփվում են նախկին և ժամանակակից հայեցակարգեր և տեսություններ:

5. Բնական իրավունքները (և առհասարակ պետությունը և իրավունքը) ստեղծված են Աստծո կողմից: Սակայն գիտության տեսանկյունից առկա է բարդություն բնական իրավունքների ծագումը Բարձրյալի հետ կապելու և այդպիսի տեսակետը հիմնավորելու հարցում, քանի որ առկա է խնդիր Աստծո գոյության ձևերի և Աստծո արտահայտման հիմնավորման հետ: Ընդ որում, ատենախոսության հեղինակը ունի խորին համոզմունք, որ այս աշխարհում ամեն բան է աստվածային արարչագործության արդյունք, սակայն չկա ցանկություն հավատքը, խիղճը կամ հույզերը դնել հետազոտության հիմքում: Պարզապես անհրաժեշտ է ընդունել, որ այն ուժը, որը ստեղծել է այս ամենը, տվել է մարդուն նաև բնական իրավունքներ, որոնք փոփոխության ենթակա չեն: Այս առումով պաշտպանության է դուրս բերվում այն թեզը, որ մարդու բնական իրավունքները մարդակերտ չեն:

6. Չնայած բնական իրավունքի տեսության ներքին հակասություններին՝ հանդես գալով անտիկ դարաշրջանում, միջնադարում և նոր ժամանակներում՝ այն համարյա տվեց պատասխան անլուծելի թվացող հարցերին՝ այդ պատասխանի մեջ բացահայտելով արդի իրավական և փիլիսոփայական իրավական միտքը, այնուամենայնիվ, արձանագրելով, որ բացարձակության սկզբունքի վրա հենվող բնական իրավունքի արժեքները կախում չունեն սոցիալական, պատմական պայմաններից և արժեզրկման ենթակա չեն: Դրանք չեն հանդիսանում պետության կամքի արդյունք, չեն դեկրետավորվում նրա հրահանգներով և կանգնած են պետության անցողիկ շահերից բարձր: Այդ իսկ պատճառով նրանք կարող են հանդես գալ տարբեր պատմական դարաշրջանների տարբեր պետությունների օրենսդիրների օրինաստեղծ գործունեության արժեքային չափանիշների դերում:

7. Բնաիրավական ցանկացած մոտեցման համար «բնականի» և «արհեստականի» տիպիկ և էական տարբերակումը իր արմատներով խորանում է դեպի մշակույթի մեծում: Այդ մշակութային թերություններին ու վտանգներին հակադրվում էին ավանդական, բնության կողմից՝ մարդուն մեկընդմիշտ տրված, նախատուր, նախամշակութային կենսաձևն ու կենսակարգը:

8. Իդեալականացվող «բնականի» հակադրումը կամայական «արհեստականին»՝ թելադրված սոցիալացվող (այսինքն, բնությունից կտրվող, «մշակույթվող») մարդու գոյապայքարի պահանջներով, ներկայանում է որպես մարդուց դուրս և մարդու մեջ գտնվող «բնականի»՝ «արհեստականի» վտանգների ու սպառնալիքների դեմ օբյեկտիվորեն անհրաժեշտ պաշտպանության միջոց (բնության յուրատեսակ պատնեշներ ու հակակշիռներ մշակույթի դեմ): Այս պատկերացումները, ընկալված ու ձևափոխված բնական իրավական տեսություններում ուղեկցում են մարդուն նրա ողջ պատմության ընթացքում: Դրանք զգալիորեն ակտիվացան հատկապես 20-րդ դարում, երբ «բնականը» (մարդը և մարդկությունը) կրկին, հայտնվեց արհեստականի մահացու սպառնալիքի առջև (տոտալիտարիզմ, միջուկային և էկոլոգիական աղետներ և այլն):

9. Իրավունքի ոլորտում «բնականի» ու «արհեստականի» տարանջատումը իր ակունքներով արխայիկ բնական-իրավական սկզբունքի կենսունակության ու տարբեր դարաշրջաններին ու իրավիճակներին հարմարվելու պատճառը վերջնական հաշվով կայանում է նրանում, որ այդ հակադրությունը (իսկ դրա հետ միասին՝ «բնականի» ու «արհեստականի» դիալեկտիկան) ներքուստ հատուկ է մարդկության ձևավորման ու զարգացման ողջ ընթացքին: Ու թեև այդ հակադրությունների բովանդակությունը և կոնֆիգուրացիան (ինչպես նաև այն, թե ինչն է համարվում «բնական» կամ «արհեստական» այս կամ այն դարաշրջանում, այս կամ այն սոցիումում) կրում են սոցիալ-պատմական փոփոխություններ, այդուհանդերձ, բուն հակադրությունը (որպես փաստ ու սկզբունք) մնում է:

10. «Բնականի» ու «արհեստականի» հարաբերակցության բնական-իրավական և իրական պատմական ձևերի միջև գոյություն ունի զգալի անհամապատասխանություն: Այդ իսկ պատճառով՝ «բնականի» ու «արհեստականի» հակադրման (հարաբերակցության) բնական-իրավական սկզբունքը շոշափում է

մարդկության և քաղաքակրթության գոյի հակասական էությունը՝ յուրովի արտահայտելով մարդկության զարգացման էական հակասություններից մեկը: Դրանով է, իմիջիայլոց, պայմանավորված այն զգալի ավանդը, որը բնական-իրավական միտքը (աշխարհում մարդկային գոյության, մարդկության նշանակության ու ճակատագրի գլոբալ համատեքստում իրավունքի և հիմնահարցերի իրեն բնորոշող ձևով) ներդրել է ոչ միայն իրավագիտության, այլև փիլիսոփայության կայացման ու զարգացման գործում:

11. Այսպիսով, բնական իրավունքը մարդուն նախատուր և մարդկանց սահմանումների հանդեպ գերակա իրավունքն է, մարդկանց հարաբերություններում արհեստականի հանդեպ բնականի առաջնայնության և գերակայության դրսևորման իրավական ձևն է:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում.

1. **Սաֆարյան Գ. Հ., Կոչուբան Ա.Ս.** Իրավական հայեցակարգերի էվոլյուցիոն զարգացման պատմական և արդիական հիմնախնդիրները, Եր.: Ստեփանյան Պրինտ, 2025, 344 էջ:

2. **Կոչուբան Ա. Ս.** Բնական իրավունքի հայեցակարգային մոտեցումների էվոլյուցիան. Պատմական և արդիական տեսանկյունները, Եր.: Ստեփանյան Պրինտ, 2024, 176 էջ:

3. **Կոչուբան Ա. Ս.** ՀՀ վարչական դատավարության իրավունքի ընդհանուր մասի գիտագործնական վերլուծություն», Եր.: Հեղ. Հրատ., 2019, 232 էջ:

4. **Կոչուբան Ա. Ս.** Բնաիրավական հայեցակարգի ծագումն ու պատմական էվոլյուցիան, «Օրենքի պատվար» N5, 2018, Երևան, էջ 66-78 :

5. **Կոչուբան Ա. Ս.** ՀՀ վարչական դատավարություն. ինստիտուտից՝ իրավունքի ճյուղ, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», N° 2 (29), 2019, էջ 17-22:

6. **Կոչուբան Ա. Ս.** Մարդու իրավունքների բնաիրավական հայեցակարգի հիմնական թեզիսները, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», N° 2.1, 2020, էջ 68-78:

7. **Կոչուբան Ա. Ս.** Բնական իրավունքի տեսության ծագման նախադրյալները և զարգացման միտումները, «Գիտական Արցախ», N°2(13), 2022, Արցախ հրատ., Երևան, էջ 101-111:

8. **Կոչուբան Ա. Ս.** «Քննիչի հարցաքննությունը որպես պաշտպանության իրավունքի բաղադրատարր «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, N° 1, 2025, էջ 46-52:

9. **Կոչուբան Ա. Ս.** Բնական իրավունքի ազդեցությունը հայ իրավաքաղաքական ուսմունքների վրա, «Գիտական Արցախ», N° 4 (23), 2024, էջ 49-59:

10. **Կոչուբան Ա. Ս.** Բնական իրավունքի տեսության տրանսֆորմացիան նորագույն ժամանակաշրջանի իրավական ուսմունքներում եվ գործող օրենսդրությունում,

«Եվրոպական համալսարանի գիտական հոդվաների ժողովածու», № 15(02), 2024, էջ 108-123:

11. **Կոչուբաև Ա. Ս.** Իրավաբանական նատուրալիզմը (բնական իրավունքը) որպես արդարության կանխադրույթ, «Եվրոպական համալսարանի գիտական հոդվաների ժողովածու», № 15(02), № 15(02), 2024, էջ 152-165:

12. **Kochubaev A.** Issues related to the public administration and the application of natural law concept, «Alternative quarterly academic journal», Volume 4, 2024, p. 46-58

КОЧУБАЕВ АЛЕКСАНДР СЕРГЕЕВИЧ

ЭВОЛЮЦИЯ КОНЦЕПТУАЛЬНЫХ ПОДХОДОВ К ЕСТЕСТВЕННОМУ ПРАВУ: ИСТОРИЧЕСКИЕ И АКТУАЛЬНЫЕ АСПЕКТЫ

РЕЗЮМЕ

В ходе исторического развития науки, в рамках учений о праве и государстве, а также в системах этических доктрин, вытекающих либо из естественного или божественного порядка бытия, либо из природных свойств человека, естественное право выступает в качестве основополагающего понятия. Историческая миссия концепций естественного права заключалась в выражении правовых идеалов, соответствующих духу каждой эпохи. Подлинная сфера естественного права, в отличие от области позитивного права, — это сфера истины и справедливости; это система общих правовых норм, вытекающих из природы человека и призванных служить обязательным критерием и руководящим ориентиром для позитивного права. Правовой идеал, таким образом, представляет собой духовную и практическую форму овладения миром.

Юридическая наука, именно в доктрине естественного права, стремится найти ответ на вопрос о соотношении права и закона, пытается осознать, что правовые принципы и нормы являются особой, унифицированной формой общественных отношений, обладающей внутренней логикой, выступающей выражением гармонизации конкретных правоотношений.

Понятие естественного права не всегда выступает в ясном виде в тех теоретических и практических контекстах, в которых оно упоминается. Оно употребляется многократно, но не всегда должным образом. Случаи подобного непоследовательного приминения, как правило, столь незначительно различаются друг от друга, что трудно сказать, какое из толкований является преобладающим. Тем не менее, речь идет о попытке обосновать стандарты общественной и индивидуальной морали.

Вышеупомянутые категории сохраняют свою актуальность в современной юридической науке. Вместе с тем, в настоящее время, становится все более очевидным недостаток концептуальных оснований для интеграции данных понятий в единую теории права. В качестве такого основания в теории права и правоприменительной практике чаще всего выступает именно естественное право. В связи с этим, исследование развития естественного права, раскрытие сущности различных естественно-правовых теорий с позиций современного правового мышления и их переосмысление, остаются актуальными и насущными задачами независимо от того, что у многих юристов сохраняется отрицательное отношение к теории естественного права.

Настоящая диссертация является комплексным, логически завершенным и систематизированным исследованием становления и развития естественного права в истории правовой мысли. Автор попытался в контексте системы классической европейской философии права исследовать особенности проявления доктрины естественного права и проследить ее дальнейшую эволюцию, что является новаторским явлением в отечественной юридической науке.

В диссертации автор также рассматривает извечный вопрос о том, являются ли естественные права результатом общественного развития или явлением, запрограммированным Богом. Указанный принцип обусловлен тем, что практически любое право можно считать естественным, данным природой или Богом, что весьма опасно, поскольку в манипулятивном мире воля Бога может быть искажена, а личное желание может быть представлено как естественное право. В качестве подхода к преодолению этой ситуации можно принять подход, согласно которому все права и ограничения были созданы человеком для регулирования его общественной жизни. Следует учесть, что существуют права, которые настолько фундаментальны по своему значению, что близки к божественному творению, но пока Бог не заговорит с нами (как, например, Господь заговорил с Моисеем на горе Синай и дал ему правила поведения), мы не можем утверждать, что то или иное право имеет божественное происхождение.

В диссертации обосновывается научный подход о том, что противопоставление естественного и искусственного (позитивного права), наряду с их противоположной ценностной оценкой, составляет смысл естественного права. Однако, это не означает наличия объективного конфликта между естественным и позитивным правом. На современном этапе развития права отчетливо наблюдается конвергенция (процесс трансформации) естественного и искусственного, что подтверждается гармоничным развитием естественного и позитивного права в развитых правовых системах, особенно в конституционно-правовых нормах, системе прав человека и сфере правосудия.

Исходя из результатов всестороннего анализа, автор диссертации осуществил систематизацию категорий естественного права и разработал теоретические представления о месте и роли важнейших понятий естественного права. На основе глубокого изучения трудов мировых классиков философии права, автор предпринял попытку разработать оригинальную концепцию происхождения, становления и развития теории естественного права, опирающуюся на обновленные философско-правовые корреляции и переориентацию представлений о приоритетах научного анализа правовых категорий. Кроме того, в работе подробно анализируются роль и значение теории естественного права в совершенствовании позитивного права (т.е. действующего законодательства и правоприменительной практики), а также трансформация основоположных идей естественного права в национальной и международной правовых системах.

ALEXANDER SERGEY KOCHUBAEV

**THE EVOLUTION OF CONCEPTUAL APPROACHES TO NATURAL LAW.
HISTORICAL AND CONTEMPORARY ASPECTS**

SUMMARY

Throughout the historical development of science, within doctrines concerning law and the state, as well as in systems of ethical teachings derived either from the natural or divine order of existence or from the inherent characteristics of the human being, natural law has consistently emerged as a central concept. The historical role of natural law doctrines has been to articulate legal ideals corresponding to the spirit of each epoch. Unlike positive law, the true domain of natural law is that of truth and justice; it represents a system of universal legal norms arising from human nature, which must serve as a binding standard and guiding framework for positive law. The legal ideal thus constitutes both a spiritual and practical form of apprehending and shaping the world.

Legal science has sought within the doctrine of natural law the answer to the question of the relationship between law and statute. It strives to comprehend, that legal principles and norms constitute a distinct, unified form of social relations, possessing an internal logic that reflects the harmonization of specific legal relationships.

The concept of natural law does not always appear clearly within the theoretical or practical contexts in which it is invoked. It is often employed, yet not always correctly. Instances of such inconsistent usage are generally so subtle in their variations that it is difficult to determine which interpretation predominates. Nevertheless, what is at stake is an attempt to ground standards of both social and individual morality.

The abovementioned categories to retain their relevance for contemporary legal science. At the same time, the lack of conceptual foundations for integrating these concepts into a unified theory of law is becoming increasingly apparent. In both jurisprudential theory and legal practice, natural law most frequently appears as such a foundation. For this reason, the study of the historical development of natural law, the elucidation of the essence of various natural-law theories from the standpoint of contemporary legal thought, and their reinterpretation remain pressing and relevant issues—even though many jurists continue to maintain a critical or negative stance toward natural law theory.

This dissertation is a comprehensive, logically complete and systematized study of the formation and development of natural law in the history of legal thought. The author has sought, within the framework of classical European philosophy of law, to examine the distinctive features of the manifestation of natural law doctrine and to trace its subsequent evolution—an endeavor that represents an innovation within Armenian legal scholarship.

In the thesis, the author also examines the eternal question of whether natural rights are the result of social development or a phenomenon programmed by God. This principle is due to the fact that almost any right can be considered natural, given by nature or God, which is very dangerous, since in a manipulative world, God's will can be distorted, and personal desire can be presented as a natural right. As an approach to overcoming this situation, one can adopt the approach according to which all rights and restrictions were created by man to regulate his social life. It should be taken into account that there are rights that are so fundamental in their meaning that they are close to divine creation, but until God speaks to us (as, for example, the Lord spoke to Moses on Mount Sinai and gave him rules of conduct), we cannot claim that this or that right has divine origin.

The dissertation substantiates the scientific approach that the opposition of natural and artificial (positive law), along with their opposite value assessment, constitutes the meaning of natural law. However, this does not mean the existence of an objective conflict between natural and positive law. At the present stage of legal development, the convergence (process of transformation) of the natural and artificial is clearly observed, which is confirmed by the harmonious development of natural and positive law in developed legal systems, especially in constitutional and legal norms, the human rights system and the sphere of justice.

Based on the results of a comprehensive analysis, the author has undertaken a systematization of natural-law categories and developed theoretical conceptions regarding the place and role of the principal concepts of natural law. On the basis of a detailed study of the works of the great classical philosophers of law, the author has sought to elaborate an original conception of the origin, formation, and development of natural law theory—grounded in renewed philosophical-legal correlations and a reorientation of the priorities of scientific analysis of legal categories.

Furthermore, the dissertation provides an in-depth analysis of the role and significance of natural law theory in the refinement of positive law (i.e., current legislation and legal practice), as well as of the transformation of natural-law principles within both national and international legal system.

A handwritten signature in dark ink, appearing to be 'Kneufeldt' with a stylized flourish at the end.